

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, ՈՂԲ ԵԴԵՍԻՈՅ, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն,
Երևան, 1973, 157 էջ

Հայ միջնադարյան բանաստեղծական խոսքի բացառիկ արժեքներից է Ներսես Շնորհաու ռ Ուղբ Եղեսիոյս պոեմը: Եթե Ներսես Շնորհալին Գրիգոր Նարեկացուց հետո երկրորդ մեծությունն է Հայ միջնադարյան պոեզիայի անդաստանում, ապա նույնը կարելի է ասել նաև «Մատեան ող- սերդութեան» և «Ուղբ Եղեսիոյս կոթողների հարաբերության մասին»: Սրանցից առաջինը մեր հոգևոր բանաստեղծության ավարտուն ու անմրցակից բարձրակետն է, իսկ երկրորդը՝ աշխար- հականացող տրամադրությունների դարազլխային առաջնեկը: Այդ պատճառով էլ թե՛ մեկը և թե՛ մյուսը եղան ու մնացին որպես Հայ ժողովրդի հոգևոր մշակույթի անզուգական հուշարձան- ներ, մշտապես թարմ ու կենդանի: Եվ միանգամայն բնական է, որ այդ կոթողներն արժանա- նում են նորանոր հրատարակությունների ու մեկնաբանությունների: 1968 թ. «Ուղբ Եղեսիոյս» վե- րահրատարակեց «Հայաստան» հրատարակչությունը, իսկ 1973 թ.՝ այն լույս ընծայեց ՀՍՍՀ ԳԱ հրատարակչությունը: Եթե դրանցից առաջինը 1829 թ. հրատարակության սոսկական վերար- տադրություն էր և նպատակ ուներ ամփոփ առաջարանով ու սեղմ ծանոթագրություններով մաս- սայական ընթերցողին հանձնարարել այդ պոեմը (հեղինակի որոշ հանելուկների և տիեզերագի- տական պոեմի հետ միասին), ապա վերջինիս խնդիրն է տալ «Ուղբ Եղեսիոյս» գիտա-քննական լինագիրը՝ համապատասխան դիտողություններով, ցանկերով և հանձնարարական-գնահատանքով:

Հրատարակմանը մասնակցել են բնագրագիտական աշխատանքի փորձ ունեցող մասնա- գետներ Մանիկ Մկրտչյանը (դիտաքննական բնագրի կազմող, բանասիրական դիտողություն- ների, ծանոթագրությունների և ցանկերի հեղինակ), Պ. Խաչատրյանը (հանձնարարական-դնա- հատական խոսքի հեղինակ) և հմուտ ձեռագրագետ Փ. Անթրյանը (խմբագիր):

Արդ, որո՞նք են «Ուղբ Եղեսիոյս» սույն հրատարակության հիմնական արժանիքները: Ամե- նից առաջ պոեմի հիմքում դրված աղբյուրների հարստությունը: Այստեղ օգտագործվել են Մաչ- տոցի անվան Մատենադարանի հինգ տասնյակից ավելի ձեռագրերի և նախորդ հրատարակու- թյունների հիմք հանդիսացած հավանաբար մեկ տասնյակի հասնող ձեռագրերի տվյալները: Նախնական հետազոտությունից հետո ընտրվել է 15 ձեռագիր և 3 տպագիր օրինակ, որոնց հի- ման վրա էլ ստեղծվել է նոր բնագիրը: Գիտա-քննական բնագիրը ստեղծված է ընտիր ձեռա- գրերի և ճիշտ համարված տարբերակների նախապատվությամբ: Այս եղանակով հրապա- րակ է հանված մի նոր հրատարակություն, որը գերադասելի է ցարդ տպագրված բոլոր բնա- գրերից և կարող է օգտակար լինել մասնագետների համար: Սույն բնագրում կան մի շարք էա- կան ճշգրտումներ: Այսպես, օրինակ, 1968 թ. հրատարակության մեջ կարդում ենք.

Կամ զերթ առիւծ դոչէ առակ,
Փախչին երեւել անհակառակ... (էջ 100)

Ի՞նչ է նշանակում «երեւել» բառը. իր թվական իմաստով այն ուղղակի անիմաստ է դարձ- նում և՛ տողը, և՛ տունը: Բայց ահա նոր հրատարակությունից (էջ 130) պարզվում է, որ այդ- տեղ խոսքը ոչ թե համանուն թվաքանակի, այլ «երէների», այսինքն՝ որսի կենդանիների մասին է. նույն (1968 թ.) հրատարակության մեկ այլ հատվածում կարդում ենք.

զմակենկար տիպն ուրարին
Այն, որ լուսովիւրն պատէին... (էջ 78)

Գրախոսվող հրատարակության մեջ «լուսովիւրն» բառի փոխարեն առկա է «զուսովիւրն» բառը, որը ցույց է տալիս, թե ուրարը պատել է կրողների ուները: Մթազնված էր նաև հետևյալ տո- ղերի իմաստը.

¹ Այս և հետագա բնագրային ընդգծումները մերն են — Ա. Մ.:

Անուրջք և երազք էին յայտնի.
Արդ ծածկեցաւ ի վարդենի... (էջ 52)

Պարզվում է, որ ընդգծված վարդենին նույնպես վրիպակ է՝ առաջացած դարբմնի բառի աղա-
վաղումից (էջ 35):

1968 թ. հրատարակության մեջ կարդում ենք.

Կամ գերունակ նրդած խնձոր... (էջ 59)

Նոր հրատարակությամբ (էջ 49) պարզվում է, որ ընդգծված բառը վերընթերցելի է նշյալ ձևով.
տողատակում առկա է նաև «ճղոց» (Ճյուղերի) ձևը:

«Ողբ Եղեսիոյ» պոեմի նոր բնագիրը գնահատանքի է արժանի նաև ճիշտ կետադրությամբ:
Ինչպես գիտենք, միջնադարում ճշգրտված կետադրություն չի եղել. ուստի պոեմի և ոչ մի ձև-
նորոգում ընդունելի կետադրություն չկա: Նույնը պիտի ասել նաև նախորդ հրատարակությու-
նների մասին: Նոր հրատարակությամբ է, որ պոեմն ստանում է պատշաճ կետադրություն:

«Ողբ Եղեսիոյ» պոեմի կետադրության այդ ավանդական բնույթը դալով ձևադրերից՝ պայ-
մանավորված է եղել տաղաչափական ըմբռնումներով: Ինչպես կտեսնենք, այդ պոեմը դրված է
Լրկտող աներով, ուր ամեն տողում առկա է 8 վանկ (4—4): Եվ քանի որ ձևադրերում սովոր-
աբար բացակայում է նաև տաղաչափական տողատումբ, ուստի տողերի սահմանները ցույց
տալու նպատակով միջնադարում երբեմն դիմել են կետադրության օգնությանը, նախընտրելով
տողերը միմյանցից անջատել միջակետերով, իսկ տները՝ վերջակետերով: Այս առումով բացա-
ռիկ նշանակություն ունի Մաշտոցի անվան Մատենադարանի № 2079 ձևադրերը, ուր և՛ Շնոր-
հալու, և՛ այլոց ստեղծագործությունները հիմնականում կետադրված են այդ սկզբունքով: Ահա
մի օրինակ «Ողբ Եղեսիոյ» պոեմից.

Երուսաղէմ քաղաք մեծի. թագաւորին երկնաւորի:
Ուստի օրէնքն և մարգարէք. աղբիւրարար բխեալ երկրի:
Յորմէ որդին հօր միածին. լոյս ծագեցաւ անճառելի:
Եւ ինձ զբրեաց երանութիւն. յառաջագոյն քան ամենի:

Այս կետադրությունն է, որ փոխանցվել է «Ողբի» նախորդ տպագրություններին: Այսպես,
օրինակ, 1832 թ. Կալկաթայի հրատարակության մեջ, որը հավանաբար Մաղաբաի 1810 թ. հրա-
տարակության վերարտադրությունն է, հանդիպում ենք միջակետերի ու վերջակետերի այն իշխող
հաջորդականությանը, որ առկա է № 2079 ձևադրում: Այս առումով մասնակի փոփոխություններ
են կատարված 1827 և 1829 թթ. հրատարակություններում:

Թվում էր, թե 1968 թ. հրատարակությունը օժտված կլիներ իսկական քերականական կե-
տադրությամբ, սակայն այդպես չէ: Ըիշտ է, այստեղ առկա է նաև իմաստային, արդի կետա-
դրություն, բայց ավելի շատ պահպանված է միջնադարից եկող սովորույթը, որի պատճառով էլ
առաջացել է աննախադեպ խառնաշփոթ:

Ահա այս հենքի վրա է, որ գիտական տեսք ունի նաև հրատարակությունը իր ճշգրտված կե-
տադրությամբ:

Այժմ մի քանի խոսք «Ողբ Եղեսիոյ» պոեմի նոր հրատարակության տողատակային ընթեր-
ցումների մասին: Ըիշտ է, տարբերություններ կան նաև պոեմի նախորդ հրատարակությունների
մեծ մասում, սակայն դրանք շատ են աղքատիկ: Ներկա հրատարակության տարբերություններով
հարուստ տողատակերը կարող են նպաստել բնագրի հետազոտությանը: Եման հրատարակու-
թյունը հեղինակային նախօրինակին հասնելու նպատակից բացի, խնդիր ունի պարզել բնագրի
կրած գիտակցված փոփոխությունների, հավելումների, կրճատումների, ինչպես նաև թյուրիմա-
ցաբար առաջացած աղճատումների պատկերն ու պատմությունը: Սակայն գաղտնիք չէ, որ գի-
տա-քննական բնագիր ստեղծողները, որքան էլ հմուտ և շրջահայաց լինեն, դարձյալ կարող են
վրիպել, սխալվել կամ տատանվել, որսվհետև միշտ չէ, որ առկա տարբերություններից հնարավոր
է լինում նախընտրել հեղինակայինը կամ նրան ավելի հարազատը: Ուստի երբ նման դեպքում
ընթերցող-մասնագետը ևս տեղյակ է լինում այդ տարբերությունների ամբողջությանը, սեփա-
կան ուժերով կարողանում է օգտվել դրանցից և երբեմն անձամբ գտնել ճիշտ բառաձևը: Այս
առումով արժե ուշադրություն դարձնել նոր հրատարակության մի շարք տարբերությունների վրա
և առաջարկել որոշ ճշգրտումներ: Բնագրում կարդում ենք.

Իսկ առաջնորդը շարեաց նոցին,
որոց մամուլս անուանեին... (էջ 88)

Ստացվում է այնպես, թե ներսես Շնորհալին մահմեդականների առաջնորդին կոչել է մամուլ: Տարակուսելով դիմում ենք տարրենթերցումներին և այնտեղ դանում մալումս, մալումս, ուլալս ձեռքը: Եվ հենց դրանք են ճիշտ, և ոչ թե «մամուլը»: Պարզվում է, որ այս սխալը գալիս է «Հայկադյան բողոքից», Բառարանագիրները մամուլ բառի համար ձեռքի տակ են ունեցել միմիայն «Ողբ Եղեախոյի» այնպիսի օրինակ, որտեղ առկա է եղել արդեն աղավաղված մամուլ ձևը: Հետագայում այդ սխալն ուղղվել է², որին սակայն, անհաղորդ է մնացել «Ողբի» հրատարակչը:

Նույնը պիտի ասել նաև Եկաղիմ բառի մասին.

Բանիս դատամար ընդ բեղ կազիմ,
ով Անտիոք քոյր սիրելի... (էջ 28)

Ստացվում է այնպես, թե Եղեախոյի հակաճառում, կովում, վիճում է Անտիոքի հետ, որին, սակայն, հենց նույն տեղում ասում է քոյր սիրելի: Իմաստային այս հակասությունն ավելի է խորանում, երբ հետևում ենք հաջորդ մտքին: Պարզվում է, որ խոսքն այդտեղ կազիվու, կովելու մասին չէ, այլ այն մասին, որ Անտիոքում է կարգված Մատթեոսի Ավետարանը: Այս հարցի լուծմանն է, ահա, որ օգնում են տողատակային տարրենթերցումները՝ կազիմ բառի փոխարեն առաջարկելով վարդի բառը: Կազիմ բառով աղավաղվել է ոչ միայն իմաստը, այլև հանգավորումը, որովհետև այդ հատվածը հետևողականորեն զրված է «ի» հանգով: Իսկ «կազիմ» բառաձևը խաթարում է այդ կարգն իր «մ» տառով:

Այդ տողերում սխալ է առաջացել նաև կետադրության առումով: Տվյալ հատվածը մեր ճշգրտամար ստանում է հետևյալ պատկերը.

Բանիս դատամար ընդ բեղ կարգի,
Ո՛վ Անտիոք, քոյր սիրելի,
Առաքելոց տուն և տեղի,—
Ցաւետարանն Մատթէի,
Յորում անունն սքանչելի
Նախ առաջին ի բեղ դնի...

Իմաստային որոշ խաթարում ենք նկատում նաև հետևյալ հատվածում.

Ձի չէ ամով այս լինելուց,
ոչ առյապա կատարելոց,
Այլ փութապէս վճարելոց,
արագ արագ վախճանելոց... (էջ 135)

Ըստ իմաստի, ենթադրվող երևույթը տեղի է ունենալու ոչ թե ուղացումով, այլ «փութապէս», «արագ արագ»: «Ամով» (տարով) բառն այստեղ անհարկի է թվում՝ տալով կոնկրետ միջոցի (մեկ տարով) գաղափար, երբ խոսքն ընդհանուր ժամանակի մասին է («առյապա», «փութապէս» և այլն): Այստեղ էլ օգնում են տարրենթերցումները, ուր հանդիպում ենք «յամով», այսինքն՝ ուղացումով բառին: Ըստ այդմ ստանում ենք այլ պատկեր.

Ձի չէ յամով այս լինելոց...

Վերականգնվող ճիշտ ընթերցումը պահպանվել է ամենահին և ամենաշատ ձեռագրերի մեջ (AB 1-3 CDF12 fg IKL):

Տողատակային տարրենթերցումները թույլ են տալիս շտկում առաջարկել նաև ուրիշ տողերում: Օրինակ, «բազմաստեղնան» բառի փոխարեն պետք է լինի «բազմաստեղի» (էջ 24), «բաժակիև»-ի փոխարեն՝ «բաժակի» (էջ 33), «գրիսին»-ի փոխարեն «գրիսի» (էջ 34). և այս բոլորը իմաստային երանգների և հանգավորման թելադրանքով (այդ հատվածները զրված են «ի» հանգով):

Տողատակային տարրենթերցումների նշանակությունն ընդգծելով հանդերձ, չենք կարող ընկատել, որ նշված վրիպումները խոսում են նոր հրատարակության որոշ թերությունների մասին:

² Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Հայերեն բացատրական բառարան, հ. 9, Երևան, 1944, էջ 246:

ինչպես ցույց է տվել փորձը, գիտա-քննական բնադրերի հրատարակությունները մեծապես շահում են, երբ ուղեկցվում են ձեռագրագիտական-բնադրագիտական ներածականներով՝ պայմանավորված տվյալ բնադրի հետ կապված նոր և համակողմանի աշխատանքներով՝ Ալդպիսին այստեղ չկալ։ Այդ պահանջը չի վերանում ո՛չ հանձնարարական գնահատականի և ո՛չ էլ քրանասիրական դիտողություններին առկայությամբ։ Պահանջվող ներածականում պիտի պատասխան տրվեր, թե ինչո՞ւ է Ռոզր Սոնսին հրատարակվել 16 վանկանի (4-4-4-4) տողերով, երբ Ղ. Ալիշանը, Մ. Արեղյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը և ուրիշներ նույնի հատվածները հրատարակել են 8 վանկանի (4-4) տողերով, ինչո՞ւ է այդտեղ պահանջված 2. Զոհրայանի հատվածաբաժանումը (էջ 147), երբ այն դիտականորեն չի փաստարկված, ինչո՞ւ է պոեմը համարվում 1046 տողից բաղկացած երկ (էջ 143), երբ ուրիշ աղբյուրներ ուրիշ թվեր են տալիս, ինչո՞ւ է քանաստեղծական տան հասկացությունը հավասարեցվել տողի գաղափարին, երբ այդ մասին այնքան շատ նշումներ կան ձեռագրերում և նախորդ հրատարակությունների մեջ, ինչպիսի՞ առանձնահատկություններ ունեն Ռոզրին ձեռագրախմբերն ու նրա նախորդ հրատարակությունները և այլն։ Բանասիրական դիտողությունների մեջ եղած թուուցիկ ակնարկները այս հարցերին չեն պատասխանում և, փաստորեն, այդօրինակ խնդիրները տակավին մնում են չուծված։

Գաղտնիք չէ, որ միայն ճիշտ տողատման, տնտման, հատվածաբաժանման և նման այլ հարցերի պարզարանմամբ է, որ ճիշտ կըմբռնվի շահածո ստեղծագործության իմաստը թե՛ բովանդակության և թե՛ ձևի առումով։

1968 թ. հրատարակության մեջ պոեմն ունի 105 հատված, իսկ նոր հրատարակության մեջ՝ 14։ Ինչո՞ւ՞ թացատրել այս հակասությունը։ Պետք է նկատել, որ 1968 թ. հատվածաբաժանումը պարզապես թյուրիմացության արդյունք է՝ պայմանավորված 1829 թ. հրատարակության սխալ ընկալումով։ Իրականում ինչպես շատ ձեռագրերում, այնպես էլ որոշ հրատարակություններում առկա է հատուկ տեսահաշիվ. յուրաքանչյուր 10-րդ տողից հետո հայկական թվատառերով (Ժ, Ի, Լ, Խ, Ո, Կ և այլն) նշված է տների աճող հաջորդականությունը։ Ալդպիսի հաշիվ է պահպանված նաև 1829 թ. հրատարակության մեջ։ 1968 թ. վերահրատարակության մեջ այդ թվերը դիտված են որպես հատվածաբաժանման նշաններ, ուստի և դուրս են թողնվել, պահելով միայն հատվածաբաժանման շարվածքը։ Այսպիսով՝ կատարվել է միանգամայն սխալ հատվածաբաժանում, որը մեծապես վնասել է քննադրի իմաստը ճիշտ ընկալելու։

Նոր հրատարակության հատվածաբաժանումը գալիս է 1827 թ. հրատարակությունից, որը համեմատաբար տրամաբանական է, սակայն դա ևս սխալ է, որովհետև չի գտնված հեղինակային հատվածաբաժանումը։

Արդ, ո՞րն է Ռոզր Եղեպոյա պոեմի հեղինակային հատվածաբաժանումը։ Այս հարցին պատասխանելուց առաջ անհրաժեշտ է անդրադառնալ Վարդան Հայկազնի «Տաղ գերեզմանական» կոչված ողբին։ Իրականում լուկ այս երկն է, որ կարող էր նախօրինակ համարվել Ռոզր Եղեպոյա պոեմի ստեղծման համար և՛ բովանդակությամբ, և՛ ձևով։ Վարդան Հայկազնն է, որ առաջին անգամ ողբի նյութ է դարձրել հայ ժողովրդի հայածական վիճակը, դրանով իսկ արտահայտել քաղաքական-հայրենասիրական տրամադրություններ՝ կապված Անիի անկման և ժողովրդի թափառական ճակատագրի հետ։ Այն և՛ դիմառնական է, և՛ հանգավոր, և՛ հատվածաբաժան, և՛ տներով գրված։ Այս գործին հետևելով է, որ ներսես Շնորհալին գրել է իր պոեմը, ուստի և այն բանալի է Ռոզր Եղեպոյա հետ կապված որոշ հարցեր լուծելու համար։

Արդ ինչպիսի՞ն է հատվածաբաժանումը Վարդան Հայկազնի նշված գործում։ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2496 ձեռագրի լուսանցքում կան հատուկ նշումներ և՛ հատվածների, և՛ տների վերաբերյալ։ Այսպես, առաջին հատվածի դիմաց գրված է. «Տունք ԺԵ. փոխ Ան։ Դա նշանակում է, որ այդ հատվածը գրված է, որպես առաջին փոխ և բաղկացած է 15 տնից։ Ըստ այդմ, ամեն հատված համարված է առանձին փոխ։ Վերջիններիս տեսքնակները տարբեր են։ Կարևորն այն է, որ այդ փոխերը միմյանցից տարբերվում են հանգավորմամբ։ Ամեն մի փոխ ունի իր առանձին հանգը։ Ուստի այդ երկի հատվածաբաժանումը պայմանավորված է նրա հանգավորմամբ։ Դա հիմք է տալիս մտածելու, որ ներսես Շնորհալին ևս իր պոեմը գրել է այդ սկզբունքով։

Այս ենթադրությունը հաստատվում է ուրիշ փաստերով ևս։ Այսպես, օրինակ, ներսես լամբրոնացին ներսես Շնորհալու մահվան առթիվ դրելով իր Ռոզրը, հետևել է նրա Ռոզր Եղեպոյա պոեմին և Վարդան Հայկազնի նշված գործին՝ ստեղծելով «Ին, աա» («այն»), «աա», «եաա»

և բազմաթիվ այլ հանգևորով գրված մի ողբ, որի 1832 թ. հրատարակողը հենց այդ հանգևորի հիման վրա էլ այն բաժանել է հատվածներին:

Առավել ուշագրավ է հետևյալ փաստը: Արար բանաստեղծ Մանուկեն, վիճելով Գրիգոր Մագիստրոսի հետ, պարծնում է, թե իրենք կարողանում են ստեղծել այնպիսի բանաստեղծություններ, որոնց «այսչափ տուն ա՛յս գրով և այսչափ ա՛յս անուն գրով»³ է շարադրված լինում: Այսինքն, հանգն է հատվածաբաժանման ելակետը, որովհետև «ա՛յս գրով» նշանակում է ա՛յս ճանգով կամ այս ստառաճանգով: Ահա հենց այս սկզբունքն է, որ կիրառել է Վարդան Հայկազեն՝ Գրիգոր Մագիստրոսի որդու մասին գրած իր տաղական ողբում:

Կարևոր է նաև ուրիշ փաստեր վկայակոչել, բայց խնդիրն այսքանով պիտի լուծված համարել: Այս եզրակացությունը պիտի տարածվի նաև համանման ուրիշ ստեղծագործությունների վրա: Ըստ այդմ, Ողբ Եղեախոն» պիտի բաժանվի 14 հատվածի: Երկր է, շ. Զոհրարյանն էլ է այն 14 հատվածի բաժանել, բայց նա դիմել է իմաստային ինքնահնար եղանակի, մինչդեռ պետք էր ելակետ ունենալ այն 14 հանդերը («ի», «էր», «որ», «ան» («ամ»), «այ», «ին», «ամ» («ան»), «ես», «եր», «ի», «ար», «ակ» («ար»), «աց» («ած»), «ոց»), որոնցով գրված են Ողբ Եղեախոն» տարբեր հատվածները: Նկատենք, որ շ. Զոհրարյանի հատվածաբաժանման ժամանակ լոկ «ի» հանդով դրված հատվածն է համընկել հեղինակային հատվածաբաժանմանը, իսկ մնացածները՝ ոչ:

Այժմ անդրադառնանք տողատման հարցին: Չնայած Ողբ Եղեախոն» ամբողջապես արդեն 7-րդ անգամն է հրատարակվում, սակայն նրա տողատման սկզբունքը դեռևս չի ճշգրտված: Այն երբեմն հրատարակվել է 16 վանկանի տողերով (4—4—4—4), մերթ էլ՝ 8 վանկանի (4—4). ըստ այդմ էլ ընդհանուր տողերի քանակը կրկնակի տարբերություն է տալիս:

Այս առումով ևս դիմենք Վարդան Հայկազենի «Ողբին», որի բոլոր օրինակների վերջում նշված է, որ այն բաղկացած է «3ՂԴ» (394) տնից: Ղ. Ալիշանը հրատարակելով նույնի մի ընդօրինակությունը, այդ տվյալի («3ՂԴ» տուն) հիման վրա նկատում է, թե իր հրատարակածում պակասում են «երկու տունը, որ է շորս տող»⁴: Այստեղից պարզ երևում է Ղ. Ալիշանի կարծիքը նշված գործի տների երկտողյա կառուցվածքի մասին: Հիրավի, «Տաղի» և՛ տպագրված, և՛ անտիպ օրինակները համոզում են, որ ամեն տուն բաղկացած է 2 տողից: Դա երևում է նաև վերևում հիշված № 2496 ձեռագրից, որի լուսանցքներում գրված փոխերի հաշիվների ժամանակ տուն հասկացությունը երկու տող է:

Իսկ ինչպես ցույց են տալիս «3ՂԴ» տան նշումը և «Տաղի» առկա տողերի հաշիվը, այդտեղ ամեն տող բաղկացած է 8 վանկից (4—4) և ավարտվում է համապատասխան հանգով: Հենց այդպիսի տողատմամբ էլ շ. Ալիշանը հրատարակել է այն: Ահա նրա սկիզբը.

Յորժամ ըզմիտքըս ժողովևմ
Ու ի քըննութեան բան պարպեմ,
Յանկարծ զիմոցս աղէտ յիշեմ,
Յառաջ ու ի վերջ զոր շանաշեմ...⁵

Ահա այսպիսի 4 տողն է, որ համարվում է 2 տուն:

Երկր այս սկզբունքով է գրված ներսես Շնորհալու Ողբ Եղեախոն» պոեմը, որի շատ ընդօրինակություններ ունեն տնահաշիվի գաղափարը: Հենց այդ հաշիվն է պահպանված 1829 թ. հրատարակության մեջ և դա է հիմք հանդիսացել 1968 թ. հրատարակության սխալ հատվածաբաժանման համար: Բավական կլինեն հետևել թեկուզ լոկ այդ հատվածներին, որոնք, ըստ 1829 թ. հրատարակության, միմյանց են հետևում Ժ, Ի, Լ, Կ, Մ... տասնյակահաշիվներով և ըստ 1968 թ. հրատարակության բովանդակում են 20-ական տողեր: Այսինքն, ամեն մի հատվածը դիտված է որպես 10 տուն՝ բաղկացած 20 տողից, ուր վերստին մեկ տունը ենթադրված է երկու տողից: Հիրավի, Ողբ Եղեախոն» ընդօրինակությունների մեջ ամեն անգամ, երբ նշված է ընդհանուր տնաքանակը, ապա հաշիվ է առնված երկտող տան գաղափարը: Իսկ այդ տների տողերն էլ բաղկացած են ոչ թե 16-ական վանկերից, ինչպես գրախոսվող հրատարակության մեջ է, այլ՝ 8-ական, ինչպես ժամանակին այդ «Ողբից» բաղվածքների բերելիս ճիշտ նկատել են

³ Գրիգոր Մագիստրոս, Տաղասացությունը, Վենետիկ, 1868, էջ 3:

⁴ «Թագմավիպ», 1873, էջ 264:

⁵ Նույն տեղում:

Ղ. Ալիշանը⁶ և Մ. Աբեղյանը⁷, ինչպես նաև 1968 թ. հրատարակության պատրաստողը, Հե-տևապես սխալ է ասել, թե «Ողբ Եղեղի»-ն «պարունակում է 16 վանկանի 1046 տող», ինչպես ասված է նոր հրատարակությունում (էջ 143): Ըիշտ կլինե՞ր զրե՛լ, թե այն բաղկացած է 8 վանկանի 2092 տողից կամ 1046 երկտող տնից:

«Ողբ Եղեղի»-ն պոեմի տողատման և տեքստի մասին հստակ պատկերացում կազմելու առու-մով հատուկ նշանակություն ունեն նաև հանդերձ, որոնք առկա են յուրաքանչյուր 8 վանկից հետո և հենց դրանով էլ ազդարարում են տվյալ տողի ավարտը: 16 վանկանի տողի մեջ 2 հանդ մտցնելը չի տալիս ոչ միայն պոեմի հստակ պատկերը, այլև հեղինակի պատկերացումը տողերի ու տեքստի մասին:

«Ողբ Եղեղի»-ն պոեմի տպագիր և ձեռագիր օրինակները միմյանցից տարբերվում են նաև ընդհանուր ծավալով. ամբողջական անաբանակր տարբեր աղբյուրներում տարբեր է՝ Ո՞րն է ճիշտը: Այս հարցը ևս չի քննված: Ներկա հրատարակությունը հավաստում է, թե այն բաղկա-ցած է 1046 տողից (իմա՝ տնից): Բայց արդյո՞ք դա ճշգրտված է համապատասխան քննու-թյամբ. այդ մասին ոչ մի բացատրություն չկա, իսկ «հավելում» համարված տողատակային հատվածները հաճախ լուրջ տարակուսանք են հարուցում: Առկա հնարավորությունները թույլ չեն տալիս ստուգել այս կարևոր փաստը, սակայն «Ողբ Եղեղի»-ի մանավանդ արտասահմա-նում գտնվող և շօտազործված ձեռագրերը կարող էին օգտակար լինել: Այս առումով, բացառիկ նշանակություն ունի հետևյալ փաստը: Ըջգրտված ընագրում կարդում ենք.

Արդ իբրև զայս կատարեցին,
զորս ի շառէն փոքր ասացի,
Ջգերելոցն, որ գերեցին,
և զորս արեամբ սրով սպանին... (էջ 84)

Ընդգծված տողն անհարիր է հատվածի հետ: Փնական բնագրի համար ընտրված աղբյուր-ներից և ոչ մեկը համապատասխան տարբերություն չի տալիս: Բայց ահա շօտազործված ձե-ռագրերից մեկում (Ձ 7244) նկատված է այդպիսի տվյալ և տարօրինակ եղանակով մեջ է բեր-ված ենթատողատակում: Մինչդեռ հենց դա էլ, ի տարբերություն մյուս օրինակների, պիտի համարվեր ճիշտ ընթերցում և մուծվեր բնագրի: Այդ դեպքում կստանայինք.

Արդ, իբրև զայս կատարեցին,
Ջերկիրն արեամբ ռզոզեցին,
Ջգերելոցն, որ գերեցին
նւ զորս արեամբ սրով սպանին...

Առաջարկվող վերականգնման ստուգությունը երևում է նաև հանգավորումից. այդ տողում այն անթերի է, մինչդեռ ընտրված «զորս ի շառէն փոքր ասացի» տողը հանգազուրկ է և ան-հարիր ամբողջությանը: Պետք էր օգտվել Ձ 7244 ձեռագրից:

«Ողբ Եղեղի»-ի քննական բնագիրը կազմելիս հատուկ ուշադրություն պիտի դարձվեր նաև գործող անձանց խոսքերը միմյանցից և հեղինակային խոսքից տարբերող նշանների (գծիկ, շակերտ) ճիշտ ու հետևողական կիրառման վրա: Դա տվյալ դեպքում խիստ անհրաժեշտ էր ոչ միայն մտքի պատշաճ հստակության համար, այլև այդ երկի (որպես պոեմի) գործող անձանց առկայությունն ավելի ընդգծելու նպատակով (էջ 58, 63, 64 և այլն):

«Ողբ Եղեղի»-ն նոր հրատարակության մեջ հատվածաբաժանման ժամանակ կիրառված են արաբական թվանշաններ (1, 2, 3, ... 14), որոնք, սակայն, չկան ձեռագրերում, ուստի պետք է այդ մասին տրվեր համապատասխան բացատրություն, այլապես ստացվում է, թե դրանք գա-լիս են ձեռագրերից և փոխարինում են հայկական թվահամարներին (Ա, Բ, Գ, ... Ժ) կամ հա-մապատասխան այլ նշումների, որպիսիք չկան:

Աղբյուրների պայմանական նշանները հիմնականում ճիշտ են օգտագործված, այդուհան-դերձ՝ կան շփոթ առաջացնող վրիպումներ: Այսպես, օրինակ, փոխանակ նշելու F_1F_2 , նշված է F_{12} (տող 2, 3, 4, 5 և այլն), կամ՝ փոխանակ նշելու B_1B_3 , նշված է B_{13} (տող 8), B_2B_3 , B_{23} (տող 12 և այլն): Պետք էր խուսափել հայոց տառերը պայմանական նշանի վերա-ծելուց (Ք, Կ, Փ), այլապես հայերեն բնագրում թյուրիմացություններն անխուսափելի են. օրի-

6 Ղ. Ալիշան, Շնորհալի և պարագայի, Վենետիկ, 1873, էջ 199—215:
7 Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1970, էջ 127—147:

նակ, 29-րդ էջում «Բեկազեմ» բառի սկզբի տառը (ԲԹ) ձեռագրի պայմանական նշանն է՝ ձուլված «կազեմ» տարբերակի մասին:

Անհրաժեշտ էր հատուկ ձևով և ծանոթագրությամբ մատուցել հետևյալ տողերը, որպեսզի ներսես Մեծի գաղափարը շփոթվեր Մեծ Հայքի գաղափարի հետ.

Ձուկ համանուն Մեծին Հայոց
ղներսէս՝ բացեալ բարեաց գործոց,
եւ շառաւիղ նորին ոստոց... (էջ 137)

Այստեղ խոսքը հայոց կաթողիկոս ներսես Մեծի մասին է, որին հեղինակը համարում է համանուն նախնի:

Ինչպես հայտնի է, նախորդ որոշ հրատարակությունների մեջ օգտագործված են մի քանի ձեռագրեր: Օրինակ, 2. Զոհրաբյանը խոսում է 3 ձեռագրերի մասին և դրանք նշանակում համապատասխան տառերով: Նոր հրատարակության պատրաստույթը պետք է դրանցից օգտվեր ըստ այդ տվյալների, յուրաքանչյուրին տալով առանձին ձեռագրի արժեք: Ըստ այդմ կունենայինք 3 ձեռագրի տվյալներ՝ իրենց տարբերություններով: Սակայն այդպես չի արված. նկատի է առնված լուի ճշգրտված բնագիրը, որպես «Փ» (Փարիզ) օրինակ, որպիսի ձեռագիր բնավ չի եղել:

Տողատակային որոշ ծանոթագրություններ տարված են բանասիրական դիտողությունների մեջ. օրինակ՝ խորադրային տարբերակումների մի մասը (էջ 145—146): Տողատակային ծանոթագրությունների մեջ տեղ են գրավում անհարկի «փխ» նշումները, երբ առանց դրանց էլ մասնագետը կարող է հասկանալ, թե այս կամ այն տարբերակումը տվյալ տողի որ բառին կամ մասին է համապատասխանում (օրինակ, էջ 53, տող 283, էջ 54, տող 293 և այլն):

Նույն տողատակերում պետք էր օգտվել «ետևառաջ» բառից, որն ավելի կարճ է, քան նրան փոխարինող դարձվածքը (էջ 28, տող 56, 64, էջ 30, տող 30 և այլն):

Ջարմանալի է, որ պոեմի ստեղծման ժամանակի մասին հանձնարարական-գնահատականում այլ տարբերակ է ցույց տրվում (էջ 17), իսկ բանասիրական դիտողությունների մեջ (էջ 15) այլ. պետք էր հասնել համաձայնության և տալ գիտականորեն ճշգրտված տարբերակ:

Կան նաև այլ թերացումներ, բայց բավարարվենք այսքանով և նկատենք, որ վերոհիշյալ դիտողություններով հանդերձ Շնորհալու ռեդր Եղեհիոյս պոեմի սույն հրատարակությունը անհամեմատ բարձր է նախորդներից: Ողջունելով ռեդր Եղեհիոյս պոեմի նոր հրատարակությունը, միաժամանակ գտնում ենք, որ այդ մեծարժեք երկի գիտաբանական բնագրի ստեղծման գործը տակավին չի ավարտված: Այն սպասում է իր կատարողին և հաջորդ, համեմատաբար անթերի հրատարակությամբ, որին պետք է ձգտեն մասնագետները՝ առավել համախումբ և կանխամտածված աշխատասիրությամբ:

Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր